

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Մահուան օտոնամեակի առիթով)

Անգիտակից և յաճախ անզգայ ամբոխի մէջ ժամանակ առժամանակ ծնւում են անհատներ, որոնք կազմակերպում են նրան, նպատակներ դնում նրա առաջ և մղում են նրան դէպի այդ նպատակները անդիմադրելի ոյժով:

Այդպիսի անհատներից մէկն էր Գրիգոր Արծրունին, որի մահուան օտոնամեակը լրացաւ այս դեկտեմբերի 19-ին:

Արծրունուց առաջ էլ մեզնում կային յառաջադիմական ձգտումներով մարդիկ, կային լուսաւոր գաղափարների նոյն իսկ նշանաւոր քարոզիչներ, ինչպէս Նազարեան և Նալբանդեան, բայց յառաջադիմական կուսակցութիւն չը կար:

Այդ կուսակցութիւնը ստեղծեց Գրիգոր Արծրունին, որ իսկական լիբերալ լինելով՝ եւրոպական լիբերալիզմի գոյն տուեց նրան:

Եւ կամաւ գործ դրեցի օտարազգի լիբերալ և լիբերալիզմ բառերը: Նրանք շատ որոշ իմաստ ունեն, մինչդեռ ազատամիտ բառը մեղմում դեռ չի հասել այդքան որոշութեան:

Եթէ Տօլստոյին, Միխայլօվսկուն, Բէլէլին կամ Ժօռէսին լիբերալ անուանէք, նրանք կ'ասեն ձեզ, որ դուք սխալւում էք, և սակայն նրանք բոլորն էլ ազատամիտ, ազատ մտածող մարդիկ են:

Լիբերալ իսկապէս կը նշանակի ոչ թէ ազատ մտածող, այլ ազատութեան սկզբունքի կողմնակից: Լիբերալիզմ բառով հասկացւում է ոչ թէ մտածելու այս կամ այն եղանակ, այլ մի շատ որոշ աշխարհայեացք:

Լիբերալիզմի տեսակէտից՝ աշխարհիս բոլոր չարիքները յառաջ են եկել ազատութեան պակասութիւնից: Տուէք մարդկանց ազատութիւն, թոյլ տուէք, որ անհատը ապրի և գործի ազատօրէն, և երկիրը զբախտ կը դառնայ:

Լիբերալիզմը բուրժուազիայի ծնունդն է։ Այն ժամանակ, երբ Արևմտեան Եւրոպայում անհատը չղթայուած էր ամեն տեղ և ամեն կողմից, երբ նա ոչինչ էր համայնքից և համբարից դուրս, այն ժամանակ, երբ գիւղացին դեռ ճորտ էր, երբ արհեստաւորը և առևտրականը կաշկանդուած էին իրանց գործունէութեան մէջ մանրակրկիտ կանոնադրութեամբ և ամեն տեղ տիրում էր ֆէօդալական կամայականութիւնը, նոր թնաւորուող բուրժուան ընդհանուր շահեր ունէր ժողովրդի հետ և ոգեւորում էր ազատասիրական իդէալներով։

Պէտք էր փշրել չղթաները, պէտք էր ազատութիւն ձեռք բերել։

Ժողովուրդը միացաւ բուրժուազիայի հետ և ազատութիւն ձեռք բերեց։ Բայց ժողովրդի տառապանքները շատ քիչ թեթեւացան։ Բուրժուազիան առիւծի բաժին վերցրեց ազատութեան տուած բարիքներից։

Ժողովուրդը հիասթափուեց։ Նրան համոզում էին, թէ մարդկանց շահերը համերաչխ են, թէ ամեն մարդ ձգտելով իր երջանկութեանը նպաստելու է ընդհանուր երջանկութեանը, թէ ազատ մրցումը կունենայ միմիայն բարերար հետեւանքներ։ Մինչդեռ փորձը շուտով ցոյց տուեց, որ գոյութեան կռիւը օրէցօր սաստկանում է, որ այդ կուում յաղթուածների դիակները հեռանում են շատանում են և ֆէօդալական բուրգի փոխարէն, որի ստորոտը ժողովուրդն էր կազմում, իսկ հեռանում են եղացող վերին խաւերը՝ ժողովրդի գլխին նստած իշխող դասակարգերը, ստեղծուում է մի նոր հասարակական բուրգ, որի խաւերը բաժանուում են հարստութեան չափով և որի ամբողջ ծանրութիւնը դարձեալ կրում է նոյն ժողովուրդը։

Պարզ էր, որ միմիայն ազատութիւնը անկարող է դաժմանել բոլոր չարիքները։ Պէտք էր մի ուրիշ բան բացի ազատութիւնից։ Եւ անա այդ ուրիշ բանը չէր տալիս լիբերալիզմը։

Եւ լիբերալիզմը Եւրոպայում կորցրեց իր հրապոյրը, իսկ շատերի աչքում՝ նոյն-իսկ իր ամբողջ վարկը։

Այժմ Եւրոպայում լիբերալները ժողովրդական կուսակցութիւնների ամենաթոյլ տարրն են կազմում։ Մի քանի տասնեակ տարի էլ, և նրանք անախոսնիզմ կը դառնան, որովհետեւ նրանց *raison-d'être*-ը կորաւ այն ժամանակից ի վեր, երբ ժողովրդական աւելի արմատական կուսակցութիւնները հրաժարուելիքն ժողովրդին բռնի կերպով երջանկացնելու ցնորքից և սկսեցին ըստ արժանոյն գնահատել ազատութեան գաղափարը, որին չափազանց արհամարհանքով էին վերաբերում մի ժամանակ՝ դառն հիասթափութեան ազդեցութեան տակ։

Համակրելի և տաղանդաւոր լիբերալներ այժմ եւրօպայումս դուք կարող էք գտնել միմիայն իբրեւ հազուադիւտ բացառութիւններ։ Մի Ռիխտէր՝ Գերմանիայում, մի Մօուէյ՝ Անգլիայում, մի Կլէմանսօ՝ Ֆրանսիայում, և մի քանի ուրիշը՝ գրանց շուրջը։

Այդպէս չէր այն ժամանակ, երբ լիբերալ կուսակցութիւնը ժողովրդական կուսակցութիւն էր, երբ նա ղեռ չէր կատարել իր միսիան։

Այն ժամանակ նա փայլում էր բարոյական և մտաւոր արժանաւորութիւններով։

Կուսակցութիւններն էլ ունեն իրանց բախտը և ժամանակը։

Եօթնամսական թուականների սկզբին, երբ Գրիգոր Արծրունին հիմնեց «Մշակը», լիբերալիզմի քարոզը կարող էր միայն քարերաք ազդեցութիւն ունենալ մեղմում։

Հայ հասարակութեան վերածնութիւնը նոր էր սկսուել և ամբոխը դեռ խորխափում էր միջնադարեան խաւարի մէջ։ Քաղաքակրթութեամբ հասարակութիւն չը կար։ Կար տիրացուների ժողովուրդ, պէտք էր քաղաքակրթել այդ ժողովուրդը։ Պէտք էր եւրօպականացնել նրան։

«Յիսուսներորդ թուականների սկիզբն էր,—գրում էր Գրիգոր Արծրունին իր մահից երեք ամիս առաջ՝ Գամառ Քաթիկոսի մահուան առթիւ,—երբ հայերին նոր էր վիճակուած շփուել համամարդկային քաղաքակրթութեան հետ։ Այդ տեսակ բողոքներում ամեն ազդի առջեւ ճակատադրական ձեւով կամ, աւելի լաւ ասենք, բնական օրէնքով դրւում է իր գոյութեան խնդիրը, առաջարկւում է «լինել կամ չը լինել» ստիպողական սարսափելի հարցը... Կամ փտել, մեռնել՝ հնաւանդ, անկենդան, անշարժ անցեալի անդունդի մէջ,—կամ հերոսաբար իրանից թափ տալով հնութեան փոշին, վճռողաբար և աներկիւղ կերպով ոտք կոխել ժամանակակից քաղաքակրթութեան լայն և լուսաւոր շաւղի վրայ...»

Արծրունին այդ քաղաքակրթութեան միսիօնէրը լինելու կոչումն էր զգում իր մէջ և հաւատում էր իր գործին իբր իսկական միսիօնէր։

Եւ այդ հաւատն էր, որ այնքան ոյժ էր տալիս նրան իր բազմաթիւ հակառակորդների դիմաց։

Բեռնէի նման նա կարող էր ասել. «Խօնչն է, որ ինձ վստահութիւն է ներշնչում, թէ ես կը յաղթեմ ամենանշանաւոր խելօք մարդկանց։ Այդ վստահութիւնը ինձ ներշնչում է իմ հաւատը, իմ մաքուր խղճի զիտակցութիւնը։ Միայն միւր հա-

ւատ ունենք, մեր հակառակորդները հաւատ չունենաւ Անկեղծ ժամանակ՝ նրանք այլապէս են մտածում, քան մենք, իսկ կեղծելիս՝ այլապէս են խօսում, քան մենք, բայց նրանք դաւանանքներ չունեն, որ կարողանային հակադրել մեր դաւանանքներին: Եւ այդ պատճառով մենք կը յաղթենք, իսկ մեր թշնամիները ամօթապարտ կը լինեն:

Նոյն Բէօռնէի նման Արծրունին համոզուած էր, թէ «ձըշմարտութեան յոյները, որ հոգով հարուստները կուտակում են մեծ գրքերի մէջ, չեն կարող բաւարարութիւն տալ հոգով աղքատների ափսոսանք, կենսական կարիքներին: Այդ կարիքներին դոհացում տալ կարող է միայն շրջուն դրամ դարձրած դիտութիւնը... Ծիշտ է, ամսագիրների և լրագիրների տոկոսութեան համար էլ, ինչպէս դրամի տոկոսութեան համար, անհրաժեշտ է անաղնիւ մետաղների խառնուրդ, բայց այն, ինչ որ աւելի պիտանի է դարձնում մի բան, չի կարող ստորացնել նրա արժանաւորութիւնը: Եւ իսկապէս, այն պղինձը, որ լրագիրները տարածում են ժողովրդի մէջ, աւելի արժէք ունի, քան գրքերի մէջ պարունակուած ամբողջ ոսկին» (Բեօռնէ, Շարադրութիւններ, II հատոր):

Եւ Արծրունին քսան տարի չարունակ «Մշակի» միջոցով տարածում էր հայ ժողովրդի մէջ «շրջուն դրամ դարձրած գիտութիւնը»: Եւ հէնց նրանումն էր գլխաւորապէս կայանում Արծրունու հրապարակախօսական տաղանդը, որ նա կարողանում էր եւրոպական լիբերալիզմի գաղափարները մատչելի դարձնել մի ասիացի տիրացուամիտ ժողովրդի:

Միշտ ժողովրդին և միմիայն ժողովրդին ի նկատի ունէր Արծրունին գրելիս: Ժողովրդի համար էր գրում և ժողովրդի շահերի տեսակէտից էր գրում: Եւ ժողովուրդը գնահատեց նրան: Նրա թաղումը համաժողովրդական թաղումն էր: Նրան թաղում էր հասարակ, խեղճ ժողովուրդը, պարագլուխ ունենալով ազատամիտ ինտելիգէնցիայի ներկայացուցիչներին:

Այդ ինտելիգէնցիայի մէջ կային ոչ միայն զուտ լիբերալներ, այլ և արմատական հայեացքների ներկայուցուցիչներ, որոնք, չափ և չափ հարցերում համամիտ չը լինելով Արծրունուն, զգում էին սակայն, որ դեռ իրանց և լիբերալների ճանապարհները զուգահեռաբար են գնում, և մեծ յարգանքով էին վերաբերում Արծրունուն, իբրեւ անկեղծ, շիտակ և գէմօրատ լիբերալի և տաղանդաւոր մարդու:

Ինչո՞ւմն էր Արծրունու տաղանդը: Փայլ և գեղեցկութիւն զուր կը լինէր փնտոել նրա գրուածքներում: Արծրունին ուտիլի ստարիստ էր մինչև ուղեծուծ և հոգ չէր տանում ոճի ոչ

միայն գեղեցկութեանը, այլ և յաճախ կանոնաւորութեանը՝ Նա գրում էր միայն նրա համար, որ իրան հասկանան և համոզուեն՝ Նա արտիստ չէր, ոճի վարպետ չէր։ Բայց նա գրում էր վերին աստիճանի պարզ ու մատչելի լեզուով և համոզմունքի բացառիկ եռանդով։ Նրա ոճը զօրեղ էր և ազդու, անպաճոյճ և անկեղծ, և նա գիտէր համակուել ընդհանուրի տրամադրութեամբ, դուրս գալ իր անձնաւորութեան սահմաններից, ապրել ուրիշների կեանքով, վերզդալ ուրիշների ցաւերն ու խնդութիւնները, և խօսքի ոյժով վարակել ընթերցողներին իր տրամադրութիւններով, հաղորդել նրանց իր ցաւակցութիւնը և խնդակցութիւնը, իր զայրոյթը և հիացմունքը։ Նա գիտէր նոյնպէս խարազանել վատութիւնը, նշաւակել ստորութիւնը և ծաղրել յիմարութիւնը։

Եւ զարմանալի չէ, որ նա դարձաւ անագին բազմութեան մտքերի և սրտերի իշխանը և անջնջելի հետք թողեց իր յետեւից։

Նա մի ամբողջ նոր աշխարհայեացք մտցրեց հայ ժողովրդի գիտակցութեան մէջ և իր անձնաւորութեան կնիքը դրեց հայ յառաջագիմական կուսակցութեան վրայ, Նա ամենօրեայ ընթերցանութեան պահանջ զարթեցրեց ուստահայերի մէջ և հասարակական ոյժ դարձրեց հայ լրագիրը։ Քառորդ դար շարունակ նա ապրեց ընդհանուրի ցաւերով, քարոզեց այն, ինչ որ ճշմարիտ էր համարում, և մաքառեց նրա դէմ, ինչ որ չարիք էր իր համոզմունքով։

Նա ջերմ կերպով էր սիրում և խիստ էր ատում, և նոյնպիսի զգացմունքներ էր զարթեցնում իր վերաբերմամբ։ Եղան այնպիսիները, որոնք կուռքի տեղ պաշտում էին նրան, եղան և այնպիսիները, որոնք ազգի թշնամի յայտարարեցին նրան։ Բայց անցան տարիներ նրա մահից յետոյ, հանգստացան կրքերը, մոռացուեցին անձնական հաշիւները, լուեցին անբարեխիղճ յարձակումները ու միամիտ ներքողները, և այսօր, երբ լրացաւ նրա մահուան տասնամեակը, անկասկածելի է գրեթէ ամենքի համար, որ Գրիգոր Արծրունին իր պատուաւոր տեղն ունի այն հայ հասարակական գործիչների մէջ, որոնք մեծ ծառայութիւններ են մատուցել մեր յառաջագիմութեան գործին։

Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ